ԲԱՐՁՐԱՑԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ 1.12-14

*12 Այդ ժամանակ նրանք Երուսաղեմ վերադարձան Ձիթենյաց կոչվող լեռան վրայից, որը մոտ էր Երուսաղեմին և գտնվում էր մի շաբաթ օրվա ճանապարհի չափ հեռավորության վրա: 13 Երբ քաղաք մտան, **բարձրացան** **վերնատուն**, որտեղ մնում էին ...14 Սրանք բոլորը միշտ միաբան աղոթքի մեջ էին մի քանի կանանց, Հիսուսի մոր՝ Մարիամի և նրա եղբայրների հետ միասին:*

- *«Վերնատունը» Հովհաննեսի Ավետարանում նշանակալից տեղ է և կապված է Սուրբ Հոգու մասին Հիսուսի ուսմունքների հետ (Կարդացեք Հովհաննես 13-17):*

  Ղուկաս 22:8, 12 – 8 Հիսուսը Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեց ու ասաց. Գնացեք, մեզ համար զատկական ընթրիքը պատրաստեք, որ ուտենք: 12 Եվ նա ձեզ հարդարված մի մեծ վերնատուն ցույց կտա. այնտեղ էլ կպատրաստեք:

  Հովհաննես 17-ում Հիսուսը Զատիկի ընթրիքից հետո աղոթեց Վերնատանը:

- *Վերնատունը հաղորդակցության և վերամիավորման վայր է (Գործք 1.12-14, Գործք 2.1):*
- *Վերնատունը հոգևոր պարգևների և փոխանցման վայր է (Գործք 2.4):*
- *Վերնատունը մի վայր է, որտեղ կարելի է Աստծուն փնտրել որոշումներ կայացնելու ժամանակ (Գործք 1.24):*

*13 Երբ քաղաք մտան, **բարձրացան** **վերնատուն**, որտեղ մնում էին... (այսինքն բնակվում էին)*

I. ՎԵՐՆԱՏՈՒՆԸ ՔՈ և ԱՍՏԾՈ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐՆ Է:

*Գ Թագ. 17.19-23 – 19 Եվ Եղիան ասաց կնոջը. Ի՛նձ տուր տղայիդ. և նրա գրկից վերցրեց տղային, նրան տարավ **վերնատուն**, որտեղ **բնակվում էր ինքը**, և նրան պառկեցրեց իր անկողնու վրա: Եվ աղաղակեց Տիրոջն ու ասաց. ... 22 Եվ Տերը լսեց Եղիայի ձայնը, և երեխայի շունչը վերադարձավ նրա մեջ, ու նա կենդանացավ: Եղիան վերցրեց երեխային, վերնատնից իջեցրեց տուն և նրան տվեց իր մորը. և Եղիան ասաց. Տե՛ս, որդիդ կենդանի է:*

Դ Թագ. 4.11, 32-35 – 11 Մի օր էլ, երբ Եղիսեն եկավ այնտեղ, գնաց վերնատուն և այնտեղ պառկեց:

32 Երբ Եղիսեն մտավ տուն, տղան մեռած պառկած էր իր անկողնու վրա: 33 Նա ներս մտավ, դուռը կողպեց իրենց երկուսի ետևից և աղոթեց Տիրոջը: 34 Վեր կացավ, պառկեց երեխայի վրա ու իր բերանը դրեց նրա բերանին, իր աչքերը՝ նրա աչքերին, իր ափերը՝ նրա ափերին և երբ կռացավ նրա վրա, երեխայի մարմինը տաքացավ: 35 Եվ ելավ ու տան մեջ մեկ այս կողմ, մեկ այն կողմ գնաց և վեր կացավ ու կրկին կռացավ նրա վրա. երեխան յոթ անգամ փռշտաց. երեխան բացեց իր աչքերը:

II. ՎԵՐՆԱՏԱՆԸ ՄԵՆՔ ՆՈՒՅՆԱՆՈՒՄ ԵՆՔ ՏԻՐՈՋ ՀԵՏ:

Մեր բերանը դրեց նրա բերանին, մեր աչքերը՝ նրա աչքերին, մեր ափերը՝ նրա ափերին և այդպես մեր սրտերը բորբոքվում են Սուրբ Հոգու կրակով:

- ***Գործք Առաքելոցում վերնատուն բառը հիշատակվում է երեք անգամ: Երեք հանդիպում զորությամբ և հրաշքներով:***

1. *Երբ քաղաք մտան, **<u>բարձրացան</u> <u>վերնատուն</u>,** որտեղ մնում էին (Գործք 1.13):*

   ***<u>Արդյունքը</u>** - Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ նրանց խոսել էր տալիս Հոգին (Գործք 2.4)*

2. *Պատահեց, որ այդ օրերին նա (Տաբիթան, Այծեմիկը) հիվանդացավ ու մեռավ. նրան լվացին և **<u>վերնատանը</u>** դրեցին (Գործք 9.37):*

   ***<u>Արդյունքը</u>** - 39 Պետրոսը ելավ ու նրանց հետ գնաց: Երբ եկավ, նրան վերնատուն բարձրացրին... 40 Պետրոսը բոլորին դուրս հանեց, ծնկի իջավ, աղոթեց և դեպի ածյունը դառնալով՝ ասաց. Տաբի՛թա, վե՛ր կաց: Նա աչքերը բացեց և Պետրոսին տեսնելով՝ ուղիղ նստեց (Գործք Առաքելոց 9.39, 40)*

3. ***<u>Վերնատանը</u>**, որտեղ մենք հավաքվել էինք... Եվտիքոս անունով մի երիտասարդ նստել էր պատուհանին... նա, խոր քնով բռնված, տան երրորդ հարկից ցած ընկավ, ու նրան մեռած վերցրին:(Գործք 20.8,9)*

   ***<u>Արդյունքը</u>** - 10 Պողոսը, իջնելով, <u>նրա վրա ընկավ</u> ու գիրկն առնելով նրան՝ ասաց. Մի՛ անհանգստացեք, որովհետև հոգին իր մեջ է (Գործք 20.9-10):*

III. ՎԵՐՆԱՏՈՒՆԸ ԻՄ ՀՈԳՈՒ ԾԱԾՈՒԿ ՍԵՆՅԱԿՆ Է:

- ***Վերնատունը սպասման, բժշկության և վերականգնման վայր է:***

- ***Խնդրում եմ պատմեք ձեր <u>Վերնատան</u> փորձառության մասին:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ